Հայաստանի Ուսանողական Ազգային Ասոցիացիա

Հայեցակարգային փաստաթուղթ
ՀՓ 05-2012 առ 20.11.2012

«ՈՒՂՂԱՀԱՅԱՑ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅՈՒՆ»

Երևան 2012

Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիան մեծապես նպաստում է և ջատագովն է ՀՀ-ում և նրա սահմաններից դուրս ուսանողների շարժունությանը: Այս շարժունությունը կարող է լինել կարճաժամկետ, օրինակ՝ մեկ ուսումնական կիսամյակ, կամ կարող է լինել լրիվ կրթական աստիճանի համար: Տվյալ դեպքում ուսանողները մեկնում են մեկ կամ ավելի տարով: Այստեղ մենք խոսում ենք ուղղահայաց շարժունության մասին, այսինքն՝ ուսանողները մի ընդհանուր ծրագիր սովորում են մի համալսարանում և այնուհետև տեղափոխվում են այլ համալսարանի այլ մակարդակ:

Ուսանողների ուղղահայաց շարժունության դեպքում նրանց տրվող նպաստները պետք է սահմանվեն այնպես, որ օտարերկրյա ուսանողը կարողանա հավասարապես օգտվել իր կրթական իրավունքներից, ինչպես տվյալ երկրի ուսանողները: Այսպիսով՝ ՀՈՒԱԱ-ն գտնում է, որ արտասահմանից եկած ուսանողները պետք է ամբողջությամբ օգտվեն հյուրընկալող երկրի (տվյալ դեպքում ՀՀ-ի) տրամադրած նպաստներից և աջակցությունից: Սա ներառում է բոլոր տեսակի ծառայությունները, օրինակ՝ առողջապահական խնամքը, որպես օգնություն տրվող սննդամթերքը, էժան տրանսպորտը և այլն: Սակայն, այն, ընդհանուր առմամբ, չի ներառում տեղի ուսանողներին տրվող սոցիալական դրամաշնորհները: Այս դեպքում դա պետք է հոգա այն երկրի կառավարությունը, որի քաղաքացին է համարվում տվյալ ուսանողը: Ուսանողներին տրամադրվող բոլոր տեսակի սոցիալական աջակցությունները պետք է ամբողջովին փոխանցելի լինեն արտասահմանում: Օտարերկրյա ուսանողները պետք է հավասար իրավունքներ ունենան կրթության, աշխատանքային ոլորտներում, ինչպես տեղի ուսանողները: Այսպիսով՝ ՀՈՒԱԱ-ն ջատագովն է օտարերկրյացի և հայաստանցի (ՀՀ քաղաքացի) ուսանողների հավասար հիմքերի վրա գտնվելուն:

ՀՈՒԱԱ-ն այն համոզմունքին է, որ ուսանողներին պետք է վերաբերվել առավել արդար և հավասար կերպով: Դա թույլ է տալիս, որ ուսանողները կարողանան ինտեգրվել հյուրընկալող երկրի հասարակությանը: Այն նվազեցնում է արտասահմանում սովորելու արգելքները և խթանում է կրթական շարժունության բարձրացումը: Ի վերջո, սա նպաստում է երկրների միջև ուսանողների շարժունության հավասարակշռությանը:

ANSA Proprietary Information. Patent Protected.
Unauthorized Photocopy and Duplication Prohibited.
© 2012 ANSA. All Rights Reserved.